ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2020 թվականի N 183-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՏԱԹԵՎԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ, ԳՈՒՅՔԻ, ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ /ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԻՃԱՐԿՎՈՂ/ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ «ՏԱԹԵՎԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՏԱԹԵՎԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» և «Տաթևի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու, գույք հետ վերցնելու և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1425-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 702-Ն որոշման, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-66-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ և 24-րդ հոդվածներով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 11.3) կետով,

որոշում եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային

կազմակերպության և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպութան միջև կնքված միաձուլման պայմանագիրը:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը:

3.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» և «Տաթևի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու հետևյալ կարգն ու պայմանները.
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի սույն որոշմամբ հաստատված փոխանցման ակտերի համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության կենտրոն» և «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները հանձնում են, իսկ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն ընդունում է կազմակերպությունների առկա հիմնական և շրջանառու միջոցները, դրամական մնացորդները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, հաշվարկները, գույքը, այլ գույքային իրավունքները, պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունները: Հանձնում-ընդունումը կատարվում է համապատասխան ակտերի միջոցով, որոնք ստորագրվում են կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության կենտրոն» և «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման արդյունքում համարվում են վերակազմակերպված «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության կենտրոն» և «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

5.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

6.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության և առողջապահության և սոցիալական ապահովության վարչության վրա:

17.08.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. օգոստոսի 17
ք. Կապան